Հաստատված է
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի
Խորհրդի 30.04.2024թ-ի թիվ 12/28 որոշմամբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ -ի 2023թ.-ի գործունեության համապատասխանության վերաբերյալ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի Խորհրդի կողմից հաստատված բանկի Ներքին աուդիտի 2023թ.-ի տարեկան Աշխատանքային ծրագրի համաձայն բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներում կատարված համալիր և նպատակային աուդիտ իրականացնելու ընթացքում Ներքին աուդիտի կողմից իրականացվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին բանկի ներքին հսկողության համակարգի համապատասխանության վերաբերյալ աուդիտ:

Աուդիտ իրականացնելու ընթացքում ուսումնասիրվել են բանկի գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, բանկի կառավարման մարմինների կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին, բացահայտվել և գնահատվել են բանկում առկա ռիսկերը, բանկի կողմից դրանց կառավարման մակարդակը և ներքին հսկողության համակարգը:

Իրականացված աշխատանքները նպատակ են ունեցել ձեռք բերել բավարար հիմքեր, բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը արժանահավատ կերպով գնահատելու և համապատասխան եզրակացություն տալու համար:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ներքին աուդիտի կողմից իրականացված վերընշված միջոցառումները հիմք են տալիս եզրակացնելու, որ 2023թ.-ի գործունեության ընթացքում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ -ի ներքին հսկողության համակարգը ընդհանուր առմամբ համապատասխանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի վարչության պետ՝ **Արման Մուրադյան**